

ՅՈՒՍՈՒՖ ԻԴՐԻՍ. «ԱՆՍԵՂՈՒԹՅՈՒՆ»

Իբրև սկզբունք ընդունելով այն տեսությունը, որ որևէ երկրի մշակույթը ներկայացնող ստեղծագործությունների առաջադրած հիմնահարցերը պետք է քննել և բացահայտել տվյալ պատմական ժամանակաշրջանի լայն և խորը ֆոնի վրա, անհրաժեշտ է անդրադառնալ սոցիալ-քաղաքական այն պայմաններին, որոնք հիմք հանդիսացան 1960-ական թվականներից հետո Եգիպտոսում մի խումբ գրողների, լրագրողների, գրաքննադատների ստեղծագործությունների մեջ կատարված գրեթե կտրուկ շրջադարձին:

Ի շարս մշակույթի այլ գործիչների, Յուսուֆ Իդրիսի գրական ստեղծագործության մեջ այդ շրջադարձն արտացոլվեց առավելագույնս՝ այն բաժանելով երկու շրջանի: Ոգևորված 1952 թ. հուլիսյան ազգային դեմոկրատական հեղափոխության ձեռքբերումներով¹, Իդրիսն առաջին շրջանի իր ստեղծագործություններում կոչ էր անում պայքարել սոցիալ-քաղաքական անհավասարության դեմ՝ ռեալիստորեն նկարագրելով գյուղացիության և հասարակության ստորին խավի աղքատ ու անմխիթար վիճակը: Լցված պայծառ լավատեսությամբ ու հավատով ապագայի նկատմամբ, նա փորձում էր ուղիներ գտնել այդ վիճակից դուրս բերելու իր ժողովրդին և իր հայրենիքը:

Սակայն հուլիսյան հեղափոխությունը երկրում կայուն քաղաքական դաշտ չստեղծեց: Պայքար էր գնում քաղաքական իշխանության համար. ստեղծվել էին քաղաքական կուսակցություններ, ազգային միություններ, որոնք ունենալով երկրի տնտեսական-քաղաքական զարգացման ուղիների իրենց տարբերակները, պայքարում էին միմյանց դեմ: Այդ կուսակցություններից առավել ուժեղ էին «Ազատ Սպաներ» և «Վաֆդ» կուսակցությունները, ինչպես նաև «Մուսուլման Եղբայրներ» կազմակերպությունը, որոնք ունեին երկրի զարգացման ուղիների տարբեր կողմնորոշումներ: Երկրում ստեղծված

¹ Ն. Գ. Գովհաննիսյան «Դեղափոխական պրոցեսն արաբական աշխարհում», Երևան, 1990 թ., էջ 47-56

խառնաշփոթ և քառսային իրավիճակն իր ազդեցությունն էր թողնում նաև մշակույթի վրա: «Նոր ռեալիստական դպրոցի» ներկայացուցիչների ստեղծագործություններում լուսաբանվում էին ազգային-դեմոկրատական հեղափոխության առաջադրած խնդիրները, որոնց մեջ կարևոր տեղ էին գրավում անգլիական լծից վերջնականապես ազատվելը և Սուեզի ջրանցքի ազգայնացումը: Գրողներին հետաքրքրում էր նաև մարդն իր ներքնաշխարհով՝ ինչպես են ազդում արտաքին հանգամանքները բնավորության ձևավորման վրա, ինչ կապի մեջ են անհատը և հասարակությունը, նրանց մեջ ստեղծված հակասություններն ու համախոհությունը ինչ մակարդակներում են ի հայտ գալիս:

Օժտված լինելով իրականությունն ընկալելու բացառիկ հատկությամբ, Իդրիսը հավանաբար ավելի վաղ զգաց կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորումը և եգիպտացի անհատի հոգու ներքին հակասություններով լի տեղաշարժը: Եվ ահա երկրորդ շրջանի Իդրիսի ստեղծագործության մեջ գտնում ենք փոխակերպված, գլխիվայր շրջված բարոյական չափանիշներ. չարի հաղթանակ բարու նկատմամբ, կեղծիք, բռնություն, մահ: Այս շրջանում Իդրիսը գրեթե հրաժարվում է աշխարհընկալման ռեալիստական սկզբունքներից՝ որդեգրելով արտահայտչամիջոցների խորհրդանշական մեթոդը և անհատի կենսաբանական, բնազդային սկիզբը: Իդրիսի պատմվածքներում և նովելներում սկսում են հնչել հռեետեսական, հուսահատական նոտաներ, անհատի մարդկային հատկանիշների նկատմամբ կասկած, նախկինում ընդունված համամարդկային արժեքների կորուստ: Այդպիսի տրամադրություններ նկատելի են «Ծովահարս» /ալ-Նադդահա, 1969 թ./, «Ցանկասիրության Տուն» /Բեյթ մին Լահմ, 1971թ/ և «Ես Սուլթանն եմ, Գոյության օրենքը» /Անա սուլթան, Կղանուն ալ-Վուջուդ, 1980 թ./ պատմվածքների ժողովածուներում: Պատմվածքների մեծ մասի հերոսները զրկված են որոշակի բնութագրից, դուրս են բարոյականության ընդունված չափանիշներից, կարծես ապրում են բնազդով, արստրակտ և անճանաչելի մի աշխարհում:

Յուսուֆ Իդրիսի «Ամմեդություն» /ալ-Բարաա/ պատմվածքը նրա գրական գործունեության երկրորդ շրջանի ստեղծագործություններից է /«ես Սուլթանն եմ, Գոյության օրենքը» ժողովածու/: Այս պատմվածքի սյուժեն հյուսված է Սուեզի ջրանցքի ազգայնացման առթիվ սկսված և տարիներ ձգվող իրադարձությունների հենքով: Պատմվածքում նկարագրված է եգիպտոսի նախագահ Անվար ալ-Ադաթի սպանության դրվագը: Նա սպանվեց 1981թ. հոկտեմբերին, երբ դիտում էր 1973թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած արաբա-խորայելական 4-րդ պատերազմին նվիրված շքերթը: Սպանությունը ծրագրել էր մոլեռանդ հավատացյալների «Աթ-Թաքֆիր ուալ-Ֆիջրա» /«Քավություն և Գաղթ»/ կազմակերպությունը²: Սպանության հիմնական պատճառը 1978թ. Սադաթի այցն էր Երուսաղեմ, երբ կնքվեց հաշտության և խաղաղության պայմանագիրն Իսրայելի հետ:

«Ամմեդություն» պատմվածքի բնույթը հոգեվերլուծական է: Այն նկարագրում է հերոսի հոգեվիճակը, նրա տվյալտանքները, ապրումները Սուեզի ջրանցքի մյուս ափն անցնելու առիթով: Այստեղ էլ առաջանում է «ամմեդության» կամ «մեդավորության» գաղափարը:

Պատմվածքի հիմնական հերոսներն են հյուրը, գնդապետը և հյուրի որդին: Գլխավոր գործող անձը հյուրն է, որը սկզբից մինչև վերջ պատմում, ներկայացնում և տրամաբանում է: Մյուս հերոսները, կարծես անկշռելիության վիճակում, հայտնվում և անհետանում են: Սա երազային մի աշխարհ է, որտեղ հերոսներն անճանաչելի են, ուրվագիծ վիճակում և սյուժեի զարգացման հետ միայն դառնում են տեսանելի ու ճանաչելի:

Ինչպես նկատում է հյուրը կամ այցելուն գնդապետը քաղաքացիական հագուստով է: Նրա հագին կա տաբատ և կիսաթև վերնաշապիկ: Նա ճաղատ է և «ավելի գեր է երևում, քան թերթերի նկարներում»: Նրա մի աչքը կապված է սև կապով: Այս նկարագրության շնորհիվ կարելի է հասկանալ, թե ով է իրականում այդ անձնավորությունը: Դա գնդապետ Մոշե Դայանն է՝ Իսրայելի բանակի ղեկավարներից մեկը, որը մասնակցել է արաբների դեմ ուղղված չորս

² Эрвин Рети «Смерть на трибуне», Москва, 1983 г., ст. 6-21.

պատերազմներին: Նա շատ հարգված էր ոչ միայն իր ժողովրդի կողմից, այլ նաև թշնամու կողմից: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հյուրը կամ այցելու՝ նախագահ Սադաթն է, որը հրավեր է ստացել Երուսաղեմ այցելելու: Պատմվածքում հյուրը նավակով գալիս է մյուս ափ, այսինքն կտրելով Սուեզի ջրանցքը, գալիս է Իսրայել:

Տեղեկություններ տալով գնդապետի մասին, հյուրն այնուհետև նկարագրում է նավահանգստում հավաքված ամբոխը և հյուրերին, որոնք ավելի զարմացած էին, քան թե լցված թշնամանքով: Նրանք նայում էին լռության մեջ, «զարմանքի լռության, հետաքրքրության լռության և Դատաստանի օրվա լռության»³, նշում է հյուրը:

Իդրիսը պատմվածքում մի քանի անգամ կրկնելով լռությունը բնորոշող բառակապակցությունները, ստեղծում է յուրատեսակ գեղարվեստական արտահայտչության հնարանք, ավելի տպավորիչ դարձնելով այն պահը, երբ հերոսը ուռք է դնում Սուեզի ջրանցքի հակառակ ափին:

Զնայած այն բանին, որ հյուրն ընդունել է հրավերը և անցել ջրանցքը, նրա ցանկությունն այնքան էլ մեծ չէր. «Առանձնապես ցանկություն չունենալով, կարելի է ասել ընդհանրապես չցանականալով՝ ես անցա ջրանցքը»⁴: Ինչպես նա նշում է, այցի հիմնական նպատակը «մոտիկից նայելն էր»: «Ես նայում էի հեռավոր ափից, իսկ այժմ կարող եմ նայել շատ ավելի մոտիկից»: Կարելի է եզրակացնել, որ նրա այցի նպատակը հասարակական-քաղաքական չէ, այլ սովորական մարդկային հետաքրքրասիրություն է:

Այցելուին անընդհատ թվում է, թե նա այլ մոլորակ է ընկել. «Ես քայլում եմ ավազոտ ափով, ուռքերս հազիվ են շարժվում: Ես կշիռ չունեմ, կարծես լուսնի վրա լինեմ՝ լուսնի այն կողմում»: Այդ վայրը կարծես այլ ժամանակային գոտի լինի. «Արևը հակառակ ուղղությամբ է պտտվել, լույսը շատ թույլ է: Այն գալիս է բոլոր հնարավոր կողմերից և տարածվում բոլոր հնարավոր ուղղություններով: Արդյունքում ոչինչ չի մնում՝ ընդամենը լույսի մի թույլ

³ Յուսուֆ Իդրիս «Անմեղություն», Կահիրե, 1980թ.:

⁴ Այստեղ և հետագայում չակերտների մեջ բերված տողերը Յ. Իդրիսի «Անմեղություն» պատմվածքից թարգմանված հատվածներ են:

ստվեր»։ Նրա աչքի առջև բացվում է ծովափնյա մի անսովոր աշխարհ, ինչպես նաև գաղտնի զենքի գործարաններ։ Եվ այս ամենը ղեկավարում է այն մի աչքանի արարածը՝ գնդապետը, որն ունի մի գերբնական ուժի աղբյուր՝ ձեռնափայտ։ Այդ ձեռնափայտը՝ առկայծելով ռադիոակտիվ լույսով, կատարում է նրա բոլոր ցանկությունները։

Եթե այս ամենին մակերեսորեն մոտենանք, ապա կթվա, թե ամեն բան նորմալ է և ոչ մի հակասություն գոյություն չունի հյուրի և գնդապետի միջև։ Ամեն բան շուրջը ժպտում է։ Սակայն հյուրի զգացմունքներն ու մտքերն այլ են։ Մի կողմից, նրան հիացնում է գնդապետի պահվածքը, նրա ուժն ու հզորությունը։ Մյուս կողմից, հյուրը կասկածով է վերաբերվում գնդապետի արարքներին։ Գնդապետը շատ քարեհամբույր և կիրթ է հյուրի նկատմամբ, բայց նրան նույնպես անհանգստացնում են հյուրի այցելության հիմնական նպատակն ու պատճառները։ Դուրս իր հերթին գնահատում է գնդապետի հյուրընկալությունը, սակայն վստահության զգացումը դեռևս բացակայում է։ Այցելուին հանկարծ թվում է, որ հյուրընկալության հիմնական նպատակն իրեն սպանելը, վերացնելն է։ Այդ իսկ պատճառով նա հրաժարվում է սեղմել գնդապետի ձեռքը. «Ինչպես կարող եմ ես սեղմել նրա ձեռքը, այն լի է օձերով, կարիճներով, մողեսներով։ Ես վստահ եմ, եթե ես այդպես վարվեմ, եթե ես նույնիսկ երկարացնեմ իմ ձեռքը, այդ զգվելի արարածները կկաչեն ինձ և ես այլևս երբեք չեմ կարողանա պոկվել, առանձնանալ նրանցից»։ Ինչպես նկատելի է, պատմվածքում այլաբանորեն պատկերված են արաբա-խորայելական բոլոր անհամաձայնությունները և թշնամանքը։

Պատմվածքում պատկերավոր կերպով նկարագրված է, թե ինչպես էր գնդապետը դիմում ամեն հնարավոր քայլի, որպեսզի ստիպի հյուրին իր հյուրընկալությունից օգտվել։ Նա աշխատում է հյուրին գայթակղել կանացի զեղեցկությամբ. «Շատ հեռվից գալիս էր կանանց, աղջիկների, տասներեքամյա երեխաների մի մեծ ամբոխ։ Այդ ամբոխը ոչ սկիզբ ուներ, ոչ վերջ»։ Դուրսին տրվում է ընտրելու հնարավորությունը. «Ձեր առջև սեղանը լի է, ընտրեք ում կցանկանաք։ Ահա այստեղ կան փորձված կանայք, երիտասարդ այրիներ, զեղեցիկ, սակայն աղքատ կանայք»։ Այցելուն ամեն կերպ ուզում է հաղթահարել իր ցանկությունը. «Ձեռքերս դողում են, չեմ կարողանում

շարժվել: Տղամարդկային բոլոր զգացմունքները վայրի գազանի նման տանջում են ինձ, սակայն ես կարծես ժայռից պոկված մի պինդ, անզգա քարի կտոր լինեմ, ես ուղղակի նայում եմ, նայելը ոչ մի մեղք չէ: Իմ սիրտը, իմ հոգին մաքուր են Աստոծ առջև»: Կանայք պարում են նրա առջև. «Նրանց մարմինը շարժվում է, ամեն շարժման հետ մեկտեղ կարելի է լսել «ընտրիր ինձ, վերցրու ինձ և տար քեզ հետ» արտահայտությունները: «Ես ուղղակի նայում եմ: Ցանկությունը սպանում է ինձ, սակայն ես ոչինչ չեմ անի, ես կշարունակեմ նայել»:

Այս ամենի ետևում կանգնած է հզոր գնդապետը. «Ես չգիտեմ, թե այժմ նա որտեղ է: Կարծես թե նա կարողանում է միշտ ընտրել մի այնպիսի տեղ, որտեղ ես նրան չեմ տեսնի: Ամենայն հավանականությամբ նա այստեղ է, ես զգում եմ նրա ծանր հայացքն ուսիս վրա: Նա ինձ կանչում է, հրավիրում և տալիս իր օրհնությունը: Եթե ես նույնիսկ ընտրեմ մի տասնամյա աղջնակ, նա կտա իր հավանությունը»: Պատմվածքում գնդապետը հանդես է գալիս իբրև խորամանկ և գիտակ մի քաղաքագետ, որին հայտնի են իր նպատակին հասնելու բոլոր միջոցները: Նրան ծանոթ են մարդկային թուլությունները: Բացի կանացի գեղեցկությունը և հմայքը հրամցնելուց, գնդապետը փորձում է այցելուին գայթակղել նաև դրամով. հյուրի կողմից նկարագրվող այն դրվագում, երբ կնոջ շրթներկը վերածվում է բազմատեսակ դրամներով լի մի պայուսակի, սակայն հյուրը դրամով էլ չի գայթակղվում: Նրան հանգստացնում է այն միտքը, թե իր նպատակը եղել է միայն մոտիկից ամեն ինչին նայելը: Նա անմեղ է և անբասիր: Այս ամբողջ տեսարանը հիշեցնում է սուրբ ավետարանի Ադամի և Եվայի պատմությունը: Պատմվածքում օձի դերում հանդես է գալիս Մոշե Դայանը՝ այսինքն գնդապետը: Մոշե Դայանի և գնդապետի կերպարների նմանեցումը մեզ հիշեցնում է Իսրայելի պատմության այն շրջանը, երբ Մովսես մարգարեն իր ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսի գերությունից: Այլաբանորեն գնդապետն այստեղ հանդես է գալիս Մովսեսի դերում, որը պայքարեց և բազում հրաշքներ գործեց իր ձեռնափայտով՝ դարձնելով այն թունավոր օձ, կիսելով Կարմիր ծովը և ժայռից ջուր քամելով՝ համուն իր ժողովրդի

ազատության: Այսպիսով, գնդապետը պատմվածքում հանդիսանում է եգիպտոսի հիմնական թշնամին⁵:

Վերջապես այցելուն որոշում է հեռանալ այդտեղից՝ զգալով, որ այլևս անկարող է տիրապետել իր զգացմունքներին: Վերադառնալով նավակ, նա ինքն իրեն մտածում է. «Ամեն բան անցած է, ես գիտակցում եմ, որ ոչինչ չի կատարվել, ես ոչ մի մեղք չեմ գործել, ես ընդամենը դիտում էի, անգամ մատով ոչ ոքի չեմ կպել»: Իսկապե՞ս նա անմեղ է: Նրա անմեղության հարցը այժմ հանդիսանում է պատմվածքի հիմնահարցը: Չնայած այն բանին, որ նա իսկապես կարողացավ պահել իր «ես»-ը, դա դեռ չի ապացուցում նրա անմեղությունը: Նա անցել է ջրի մյուս կողմը և դարձել մեկ այլ մարդ: Պատմվածքում մեծ կարևորություն է տրված այցելուի հոգու ներքին խռովքն արտահայտելուն: Նա ուրախ է և հանգիստ, որ հաղթահարել է բոլոր փորձությունները և մնացել մաքուր ու անմեղ: Նրա արթուն միտքը հաղթել է բնազդային զգացմունքները, նա մեղք չի գործել և արդեն կարող է վերադառնալ նավակ՝ մեկնելու համար:

Նավահանգստում ամեն ինչ նույնն է, նույն խորհրդավոր լռությունը, «հետաքրքրության լռությունը, ուրախության լռությունը, Դատաստանի օրվա լռությունը» և այդ լռության մեջ քարացած ամբոխի ճանապարհող հայացքները:

Սակայն կատարվում է անսպասելին: Արդեն մեկնելու պահին այցելուն նկատում է, որ իր որդին նույնպես զտնվում է միևնույն ավին: Որդին զարմանք է ապրում տեսնելով հորը. «Նրա հայացքը նման է նոր արթնացած մարդու հայացքի: Կարծես դատավոր լինի նա»: Նրա դեմքը դատապարտող էր, հայացքը դահիճի, նա չէր արդարացնում հորը, նույնիսկ եթե միայն դիտորդի դերում էր հանդես եկել. «Շրթունքները սեղմված են իրար: Ձեռքը դողում է: Գնդակն ուսիս մեջ: Նկատում եմ նրա աչքերի մեջ փայլատակող արցունքներ: Երկրորդ գնդակը խփում է կրծքիս: Երրորդն այլևս չեմ լսում»: Որդին սպանում է հորը:

⁵ Dalva Cohen-Mor "Innocence" by Yusuf Idris, JAL, Vol. XIX, part 1-March, Leiden 1988, p. 76

Այստեղ տղայի արարքը բացատրվում է նրանով, որ նրա համար նույնիսկ չնչին շփումը թշնամու հետ հավասար է դավաճանության: Նրան շատ է անհանգստացնում այն փաստը, որ հայրն անցել է ջրանցքի այն կողմը և որ դա կարող է վնասել ժողովրդին: Ըստ որդու, միակ փրկությունը հոր մահն է: Շատ ցավալի է իրականացնել սպանությունը, սակայն դա միակ հնարավորությունն է ազատվել սպառնացող չարիքից: Այցելուի և որդու հանդիպումով վերջանում է պատմվածքը: Հոր այսպիսի մահը մեծ ամբոխի առջև ակամայից հիշեցնում է նախագահ Սադաթի մահը: Այստեղ տղան ներկայացնում է երիտասարդ սերունդը:

Ամբողջ արաբախորայելական հարաբերությունների նկարագրությունն այստեղ բավականին մշուշապատ է: Պատմվածքում նկարագրված փաստերը մեզ հնարավորություն են տալիս գալ երկու հիմնական եզրակացության. 1/այցելուի բուռն ցանկությունը անցնել ջրանցքը և 2/նրա անվտանգությունն ուղղված դեպի գնդապետը, որը ներկայացնում է Իսրայելը:

Պատմվածքի այսպիսի վերլուծությունը բավականին պարզ և հասկանալի կթվար, եթե մենք անտեսեինք այն փաստը, որ այն գրվել է 1972թ-ին, իսկ նախագահ Սադաթը սպանվել է 1981թ. հոկտեմբերին: Հայտնի է նախագահ Սադաթի և Իդրիսի մտերիմ ընկերներ լինելու հանգամանքը: Կարելի է ենթադրել, որ Սադաթը պատմել է Իդրիսին իր Իսրայել մեկնելու ցանկության մասին: Իդրիսն էլ իր հերթին, կանխազգալով վտանգը, ինչ-որ կերպ ցանկացել է նրան ետ պահել այդ քայլից: Իդրիսի այս պատմվածքի միջոցով մենք նաև տեսնում ենք, թե ինչքան խորը և լավ է ճանաչել նա իր ժողովրդին և նույնիսկ կարողացել ճիշտ գնահատական տալ քաղաքականության հարցերում նրա կողմնորոշմանը:

Այստեղ հնարավոր է նաև մեկ այլ մեկնաբանում, թե որքան կարևոր և մեծ է այցելուի դերն իր երկրի քաղաքական կյանքում: Իդրիսի ուշադրությունը այս թեմայի նկատմամբ ցույց է տալիս պատմվածքն ընդգրկող ժողովածուի վերնագիրը՝ «Ես Սուլթանն եմ, Գոյության Օրենքը»: Այս վերնագիրը կրող և «Ամենդրություն» պատմվածքները համալրում են միմյանց և արտահայտում հեղինակի կարծիքն այս թեմայի վերաբերյալ: Իդրիսին մտահոգում է այցելուի պատասխանատվությունն իր երկրի նկատմամբ:

Արդյո՞ք նա պետք է հանդես գա որպես ակտիվ մասնակից, թե ուղղակի իբրև դիտորդ: Իսկապե՞ս նա անմեղ է, եթե հանդես է գալիս որպես դիտորդ: Հավանաբար ոչ, եթե նրա որդին ոչ մի տարբերություն չի դնում դիտորդի և մասնակցի միջև:

Իդրիսի այս և նույնաբնույթ պատմվածքներում արտացոլված են պատմական այդ ժամանակաշրջանի անկայուն վիճակը, քաղաքական կուսակցությունների պայքարը, ժողովրդական լայն շերտերի շփոթված և անհեռանկար վիճակը, որն էլ բնականաբար իր կնիքն էր դնում եզրիատական մշակույթի զարգացման ու ինքնահաստատման վրա՝ ճշմարիտ ուղղությունը գտնելու փնտրտուքի ճանապարհին: